

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«23» մարտի 2020թ.

№ 103-Ա

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԵՆԹԱԿԱ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿԱՐԱՆՏԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 16-ի N 90 որոշմամբ հաստատված հավելված 1-ի 8-րդ կետի 12-րդ ենթակետը և 14-րդ կետի 14-րդ ենթակետը, ինչպես նաև ելնելով աշխարհում COVID-19 կորոնավիրուսային վարակով պայմանավորված լարված համաճարակային իրավիճակից ու Արցախի Հանրապետությունում նշված վարակի դեմ պայքարի միջոցառումներն արդյունավետ իրականացնելու նպատակով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության ենթակա բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ղեկավարներին՝ Ձեր տնօրինած կազմակերպությունում.

1) ժամանակավորապես սահմանել կարանտին.

2) խստիվ արգելել կողմնակի անձանց մուտքը.

3) դադարեցնել հարկերի միջև հաղորդակցությունը.

4) սահմանափակել հիվանդների անցուղարձը և բաժանմունքից դուրս գալը.

5) սահմանափակել նոր հիվանդների ընդունումը, բացառությամբ՝ կյանքի ցուցման.

6) սահմանափակել քաղաքացիների ամբուլատոր-պոլիկլինիկական բաժանմունքներում իրականացվող պլանային հետազոտությունները.

7) սահմանափակել հիվանդների պլանային վիրահատությունները.

8) շինության մուտքի դռների մոտ փակցնել ցուցանակ կարանտինի մասին:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության պետ Օ. Հարությունյանին:



Ա. ԲԱՂՐՅԱՆ